«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով

Առարկան՝ Հայոց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Ալվարդ Նազարյան

Ուսումնական հաստատություն՝ Չարենցավանի N 2 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Գլուխ 1

Հիմնախնդրի ներկայացում---------- 5

Գլուխ 2

2.1 Մենթորական համակարգ----------6

2.2 Ուսուցչի օգնական----------12

2.3 Փոխադարձ դասալսումներ---------- ----------14

2.4 Համացանցը և IT տեխնալոգիաների օգտագործումը:-- ----------16
Ուսուցիչների ցանցային համայնքներ

Եզրակացություն ---------- ----------19

Հղումների և գրականության ցանկ ----------20

Ներածություն
Հետազոտության հիմնախնդրի հիմնավորում

«Ուժը միասնականության մեջ է, միասնականությունը՝ հավատքի»:

Հաջողության կարող է հասնել այն ուսուցիչը, ով հավատում է իր ուժերին, գիտի ,որ ինքը կարող է հասնել լավագույնին և իրականացնել այն ամենը, ինչն ընկած է իր ամենօրյա գործունեության հիմքում: Բայց լավագույն արդյունքը միշտ էլ ստացվում է այն ժամանակ,երբ համագործակցում ենք մեր գործընկերների հետ, քննարկում և առաջ քաշում այն հիմնահարցերը, որոնք ավելի արդյունավետ են դարձնում ուսուցչի աշխատանքը: Յուրաքանչյուրս պետք է գիտակցենք, որ մեր ուժը միասնականության մեջ պետք է լինի:

Ուսումնական հաստատության աշխատանքի արդյունավետությունը ուղղակիորեն կախված է աշխատող ուսուցիչների մասնագիտական կուլտուրայի մակարդակից, ղեկավարի կարողությունից՝ ստեղծելու պայմաններ, որոնք ապահովում են յուրաքանչյուր աշխատողի ներդաշնակ զարգացումը: Դրա համար մի կողմից անհրաժեշտ է մշտապես կատարելագործել ուսուցչի մասնագիտական ինքնակրթությունը, մյուս կողմից համագործակցումը գործընկերների հետ:Համագործակցային գործընթացում ուսուցիչների քննարկումները, կրթական նոր եղանակների վերլուծությունը, խնդրահարույց իրավիճակներից ելքերի որոնումը միտված է մեկ ընդհանուր նպատակի՝ սովորողի համար դասը դարձնել հետաքրքիր և այդպիսով բարձրացնել կրթության որակը:

Հետազոտության նպատակը և հետազոտական հարցեր. Ինչպե՞ս բարձրացնել ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետությունը:

Կրթության ոլորտում տեղի են ունենում փոփոխություններ՝ անմիջականորեն կապված մասնագետների անձի հետ: Ներկայումս մշակվում են ուսուցիչների մասնագիտական չափանիշները, որոնցում հատուկ նշանակություն է դարձվում այնպիսի որակների վրա, ինչպիսիք են մասնագիտական կարողությունները բարելավելու ցանկությունը, թիմում աշխատելու կարողությունը, գործընկերների հետ արդյունավետ փոխգործակցությունը և կրթության որակը: Մասնագիտական չափորոշիչը կոչված է բարձրացնելու ուսուցիչների աշխատանքի մոտիվացիան և կրթության որակը: Մասնագիտական համագործակցությունը թույլ կտա մասնագետներին շարունակաբար աճել, զարգացնել և կատարելագործել իրենց մասնագիտական կարողությունները.

- Երիտասարդ մանկավարժների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացումը:
- Երիտասարդ ուսուցիչների աշխատանքային դժվարությունների հաղթահարումը:
- Ինչպես համագործակցեն հմուտ մասնագետ-մենթորները երիտասարդ, սկսնակ կամ նորեկ ուսուցիչների հետ:
- Ցանկացած միջավայրում առողջ մթնոլորտը, որը հենված է առողջ համագործակցության, փոխօգնության ու օրինակելի փորձի փոխանցման վրա, խրախուսելի է: Յուրաքանչյուր դպրոցում կան կայացած ու փորձառու ուսուցիչներ, որոնք ամեն կերպ փորձում են օգնել սկսնակ ուսուցիչներին, կիսվում են իրենց մեթոդամանկավարժական գիտելիքներով, տեղեկատվական հոսքերի

կառավարման փորձառությամբ,կազմակերպում են բաց դասեր, իսկ դպրոցի երիտասարդ ուսուցիչները նոր լիցք են հաղորդում դպրոցի գործունեությանը՝ իրենց հետ բերելով ուսուցման նոր մեթոդներ, գաղափարներ: Աշխատելով փորձառու ուսուցիչների կողքին՝ նրանք ծանոթանում են ավագ գործընկերների փորձին, ձեռք բերում համապատասխան հմտություններ:

Գլուխ 1

Հիմնախնդրի ներկայացում

Այն դպրոցներում, որտեղ կան երիտասարդ ուսուցիչներ, անհրաժեշտ է պայմաններ ստեղծել երիտասարդ մասնագետի աշխատանքի և մասնագիտական աճի համար: Կրթական համակարգի զարգացման համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի այն հանգամանքը, որ երիտասարդ ուսուցիչը պետք է հնարավորինս շուտ հարմարվի գործնական գործունեության նոր պայմաններին: Սկսնակ ուսուցիչների աշխատանքի առանձնահատկությունն այն է, որ աշխատանքի առաջին իսկ օրվանից նրանք ունեն նույն պարտականությունները և կրում են նույն պատասխանատվությունը, ինչ երկար տարիների փորձ ունեցող մանկավարժները,և ծնողներն ու աշխատանքային գործընկերները նրանցից ակնկալում են նույն անբասիր պրոֆեսիոնալիզմը:Այսպիսով, երիտասարդ կամ սկսնակ ուսուցիչը պետք է ստանա փորձառու մասնագետի աջակցությունը, ով ի վիճակի է գործնական և տեսական օգնություն առաջարկել աշխատավայրում:

Գլուխ 2

Վերլուծություն

2.1 Մենթորական համակարգ

Այսօր մենթորական համակարգի զարգացումը կրկին արժանի է առավելագույն ուշադրության: ՀՀ կրթական համակարգում 2019 թվականին «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի, ՅՈՒՆԻՍԵՖԻ և ԿԳՄՍ նախարարության կողմից ներդրվեց «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիրը, որի նպատակն է վերապատրաստումների և շարունակական մենթորական աջակցության միջոցով նպաստել ուսուցիչների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացմանը՝ կենտրոնում ունենալով կրթական բազմազան առանձնահատկություններ ունեցող (ազգային, էթնիկ, լեզվական, կրոնական, սոցիալ-տնտեսական, ֆիզիկական, ինտելեկտուալ և այլն) երեխաների կրթության կազմակերպմանն ուղղված կարողությունների զարգացումը:

Ծրագիրն իրականացվում է մենթորների կողմից, որոնք, մեկ կիսամյակ գործուղվելով դպրոցներ, վերապատրաստում և մենթորական աջակցություն են տրամադրում այդ դպրոցի մանկավարժներին և ուսուցչի օգնականներին՝ մենթիներին: Ծրագիրն ուղղված է երկու խումբ խնդիրների լուծմանը.

.

- Թեմատիկ վերապատրաստում՝ ուսուցիչների ակտիվ ներգրավվածությամբ, որի ընթացքում ուսուցիչները զինվում են մասնագիտական գիտելիքներով և կարողություններով:
- Ուսուցիչների գործնական, մեթոդական, ռազմավարական կարողությունների դիտարկման և զարգացման համագործակցային փուլ, որի ընթացքն ընդգրկում է դասալսումներ, դասի համատեղ պլանավորումներ, հետադարձ կապ կատարված աշխատանքի վերաբերյալ, իրավիճակային քննարկումներ և բազմաբնույթ այլ աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում շահակիցների (մենթորների և մենթիների) խմբի առջև կանոնակարգված չափելի խնդիրներ են դրված, ուստիև ակնկալվող անհրաժեշտ կարողունակությունները հնարավոր է վերահսկել և գնահատել:

Այս ծրագիրը համագործակցության արդյունավետ ձևերից մեկն է, քանի որ մենթորի հետ կարողացել ենք պլանավորել ներառող և մասնակցային դասեր:

Համագործակցության լավագույն ձև էր մենթորի հետ աշխատանքը, վերապատրաստումները, դասալսումները, դասի պլանի քննարկումները, նոր դասի պլանավորումները, համատեղ դասերի իրականացումը: Մենթորի ուղղորդումները բավական արժեքավոր և կարևոր են ոչ միայն սկսնակ, այլև տարիների փորձառություն ունեցող ուսուցիչների համար, քանի որ կրթական գործընթացն ակտիվ օրգանիզմ է, այն անընդհատ զարգանում և առաջ է շարժվում: Տարիների փորձառություն ունեցող ուսուցիչներն առավել քան երբևէ ուղղորդման ու համագործակցելու կարիք ունեն՝ կապված ներառական կրթության, նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների ներմուծման հետ:

Դպրոցական հաստատություններ ընդունվող երիտասարդ մասնագետները հաճախ զգում են հաղորդակցության, դպրոցականների հոգեբանության խորը գիտելիքների, դպրոցական կրթության մեթոդների, մանկավարժական նոր տեխնոլոգիաների և զարգացման անհրաժեշտություն: Եթե երիտասարդ կամ սկսնակ ուսուցչին ժամանակին չօգնենք և չպահեք նման իրավիճակում, ապա հոգևոր վերելքի և էյֆորիայի առաջին շաբաթներից հետո անխուսափելիորեն կսկսվեն կոնֆլիկտները: Նա կարող է կասկածներ ունենալ սեփական կենսունակության վերաբերյալ՝ թե՛ մասնագիտական, թե՛ անձնական առումով: Որպեսզի երիտասարդ մասնագետների հետ շփումը կառուցողական լինի, մենթորը պետք է հիշի, որ չի կարող և չպետք է անընդհատ սովորեցնի երիտասարդ և անփորձ գործընկերոջը կամ միայն ցուցադրի իր սեփական փորձը: Մենթորությունը մշտական երկխոսություն է, միջանձնային հաղորդակցություն: Երիտասարդ ուսուցչի հետ աշխատելիս մենթորը պետք է օգտագործի աշխատանքի ինչպես ավանդական ձևեր (զրույցներ, խորհրդատվություններ, այցելություններ և դասերի քննարկումներ), այնպես էլ ոչ ավանդական (հոգեբանական, թրեյնինգներ, բանավեճեր, մրցույթներ, մտագրոհներ, նախագծերի մշակում, երեխաների հետ գործունեության մոդելներ):

Երիտասարդ ուսուցչների հետ աշխատանքը հիմնված է երկու հիմնական ասպեկտների վրա.

- Երիտասարդ մասնագետի հեղինակության ձևավորումը, հարգանքը, նրա նկատմամբ հետաքրքրությունը երեխաների և նրանց ծնողների կողմից:
- Երիտասարդ մասնագետ - գործընկեր՝ աջակցություն գործընկերների կողմից:

1. Մենթորը պետք է մշակի և առաջարկի մանկավարժական աջակցության օպտիմալ ծրագիր յուրաքանչյուր երիտասարդ ուսուցչի՝ հաշվի առնելով նրա անհատական առանձնահատկությունները, պրոֆեսիոնալիզմի մակարդակը և հաղորդակցման հմտությունները։

2. Մենթորը պետք է կարողանա դրական միջանձնային կապ հաստատել գործընկերոջ հետ։

3.Մենթորը դիտարկում, վերլուծում և վերահսկում է իր գործընկերոջ գործունեությունը։

4. Մենթորը պետք է օրինակելի լինի ինչպես միջանձնային հարաբերությունների, այնպես էլ անձնական ինքնակազմակերպման ու մասնագիտական կոմպետետության առումով։

Մենթորների դերը

Կախված նրանից, թե ինչ բնույթի խնդիրներ են ուղեկցում երիտասարդ մասնագետի մանկավարժական գործունեությանը, մենթորի դերում ընտրվում է փորձառու ուսուցիչը։ Դերի ընտրության սխալը կարող է հանգեցնել նրան, որ մենթորական օգնության նպատակը չի իրականացվի։ Հաշվի առնելով երիտասարդ ուսուցչի մասնագիտական կարիքները՝ կարելի է առանձնացնել մենթորների հետևյալ դերերը.

Ոիղեկցող

Այն գործընկերոջն կապահովի «ներսից» ծանոթություն ուսումնական հաստատության համակարգի հետ։ Նման մենթորը կարող է բացատրել բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության սկզբունքը, խոսել ուսումնական հաստատության պետական-հասարակական կառավարման մասին։ Մենթորը կօգնի երիտասարդ ուսուցչին գիտակցել իր տեղը թիմում, կիրականացնի իր մանկավարժական գործունեության քայլ առ քայլ ուղղորդումը։ Մենթորի ներդրումը երիտասարդ ուսուցչի մասնագիտական զարգացման գործում կարևոր է։

Շահերի պաշտպան

Կարող է օգնել լուծելու կոնֆլիկտային իրավիճակները,որոնք ծագում են երիտասարդ մասնագետի մանկավարժական գործունեության ընթացքում։ Կազմակերպում է երիտասարդ ուսուցչի մասնագիտական գործունեության շուրջ փոխօգնության և համագործակցության մթնոլորտ։ Օգնել գիտակցի իր աշխատանքի նշանակությունն ու կարևորությունը, իր հեղինակությամբ պաշտպանի ուսուցչին հնարավոր միջանձնային խնդիրներից։ Մենթորը կարող է երիտասարդ մասնագետի անունից բանակցել տարբեր միջոցառումներում նրա ներգրավման համար։

Լավագույն օրինակ

Սա օրինակելի մոդել է, շատ հզոր չափանիշ է մենթորական աջակցության արդյունավետության համար։ Մենթորն իր բոլոր անձնական և մասնագիտական նվաճումներով, սոցիալական դիրքով, աշխատառճով և հաղորդակցության մեջ

կարող է խթանել երիտասարդ ուսուցչի մասնագիտական ինքնակատարելագործումը։

Խորհրդատու

Այդ հարաբերությունների հիմքում ընկած է երիտասարդ մասնագետի անձի բարեկեցությունը։ Այս դերն իրականացնում է աջակցության գործառույթը։ Ուսուցիչը ստանում է ճիշտ այնքան օգնություն, որքան անհրաժեշտ է, երբ նա խնդրում է դա։ Մենթորի ներդրումը երիտասարդ ուսուցչի մասնագիտական զարգացման գործում պահանջում է մեծ պատասխանատվություն։

Վերահսկիչ

Այս կերպ կազմակերպված մենթորական աջակցության ժամանակ երիտասարդ մասնագետը ինքնուրույն իրականացնում է մանկավարժական գործունեություն, իսկ մենթորը վերահսկում է դրա կազմակերպման ճշտությունը, ձևերի, մեթոդների, աշխատանքի մենթոդների արդյունավետությունը։

Ցանկացած սկսնակ ուսուցիչ,ոտք դնելով կրթօջախ,միանգամից զգում է հոգեբանական և մասնագիտական աջակցության կարիք։ Գաղտնիք չէ, երբ ուսանողական տարիներին ձեռք բերված գիտելիքներով մուտք ես գործում դպրոց, առկա իրականությունը փոքր-ինչ տարբերվում է քո պատկերացումներից (չնայած այն հանգամանքին, որ պրակտիկ դասավանդումներ ունեցել ենք ուսանողական տարիներին)։ Այդ ժամանակ իրենց խորհուրդներով, աջակցություններով և փորձի փոխանակմամբ ուսուցչին աջակցություն պետք է ցույց տան դպրոցի փորձառու և սրտացավ ուսուցիչները։ Անգնահատելի է նրանց օգնությունը… Այժմ ինքս էլ, իմ ուժերի ներածին չափով, մեծ սիրով օգնում եմ և պատրաստ եմ միշտ օգնել

երիտասարդ կամ նորեկ ուսուցիչներին։ Բայց այստեղ շատ կարևոր է, երբ երիտասարդ և սկսնակ ուսուցիչները ցանկություն ունենան ընդունել փորձառու ուսուցչի օգնությունը։ Ցավոք սրտի, երբեմն փորձառու ուսուցիչների օգնելու պատրաստակամությունը նրանց կողմից, ինչ-ինչ պայմաններից ելնելով, ոչ միանշանակ է ընկալվում և խուսափում են կամ հրաժարվում են աջակցությունից։ Այդուհանդերձ, երկուստեք անկեղծ, անշահախնդիր և փոխադարձ հարգանքով համագործակցությունից են կախված ոչ միայն իրենց մասնագիտական առաջխաղացումը և գիտելիքների զարգացումը, այլև սովորողների ուսման հաջողությու

2.2 Ուսուցչի օգնական

ՀՀ կրթության ժամանակակից համակարգում կարևորվում է **ուսուցչի օգնականների** գործունեության ներդրմանը, որոնք սկսել են ծավալել 2014 թվականից։ ՀՀ-ում «ուսուցչի օգնական» հասկացությունը մեկնաբանվում է որպես կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող։ Ուսուցչի օգնականն աջակցում է ուսուցչին.

- դասի պլանավորման, ընդհանուր և անհատական նպատակների սահմանման, դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերի նախապատրաստման, ինչպես նաև ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացներում:
- Արտադասարանական միջոցառումների կազմակերպման և իրականացման, խմբի գործունեության վերահսկման և վարքի կառավարման աշխատանքներում:
- Ըստ անհրաժեշտության, դասապրոցեսի ընթացքում և դրանից հետո լրացուցիչ աջակցություն է տրամադրում բոլոր, այդ թվում ԿԱՊԿՈՒ ունեցող սովորողներին՝ խթանելով կարողությունների և հմտությունների առնվազն

պարտադիր նվազագույն պահանջների յուրացման, սովորողների անհատական և սոցիալական ձեռքբերումների զարգացման գործընթացը

- Ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների հետ համատեղ իրականացնում է դասի արդյունավետության գնահատում, ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների բացահայտում:
- Համագործակցում է սովորողների ծնողների և խնամակալների հետ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների որակյալ ուսուցման և աջակցության տրամադրման համար պատասխանատու են դասավանդող ուսուցիչները, ուսուցչի օգնականները, մանկավարժահոգեբանական աջակցության թիմը և ծնողները: Ուսուցչի օգնականները, լինելով մանկավարժահոգեբանական աջակցության թիմի լիարժեք անդամներ, պետք է մասնակցեն բոլոր հանդիպումներին և քննարկումներին, հետևողական լինեն յուրաքանչյուր սովորողի մոտ որոշակի հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

2.3 Փոխադարձ դասալսումներ

Փոխադարձ դասալսումները ուսուցչի գործունեության համար կարևոր փուլ են, երբ նա կարող է կարևոր գիտելիքներ ձեռք բերել իր գործընկերոջից: Նման աշխատանքային գործունեության իրականացումը աստիճանաբար կբարձրացնի ուսուցչի մեթոդական պատրաստվածության մակարդակը: Ուսուցիչները պետք է հաճախակի փոխադարձ հրավերով հաճախել միմյանց դասերին:

Գոյություն ունի երկու գործոն, որոնք ուղղակիորեն ազդում են ուսուցիչների կրթության արդյունավետ գործունեության և որակի վրա: Ուսուցիչը պետք է ունենա հետևյալ հմտությունները.

- Գիտակցի դասալսմանը իր ներկայության կարևորությունը,
- կարողանա սովորել և տիրապետել նորարարությունները, ինչպես նաև իր հետագա գործունեության մեջ ներառի և կիրառի այդ հմտությունները։

Գործընկերոջ դասալսումներին հաճախակի այցելելիս ուսուցչին հնարավորություն է ընձեռնվում զարգացնել իր մեթոդական գործունեությունը:Նա կատարելագործում է ինքն իրեն՝ իր համար բացելով սովորելու նոր ուղիներ։ Այսպիսով, այլ ուսուցչի դասին հաճախելու հիմնական նպատակը սեփական մասնագիտական մակարդակի բարելավումն է,իսկ փոխադարձ հաճախելու հիմնական նպատակը փորձի փոխանակումն է, ինչպես նաև հետագա մասնագիտական գործունեության մեջ նոր լիցքի ձեռք բերումը։

Փոխադարձ դասալսման հաճախելուց հետո ուսուցիչը պետք է ըմբռնի իր գրառումները դասալսման ընթացքում, ինչպես նաև մասնակցի կատարված աշխատանքի վերլուծությանը և ամփոփմանը։ Ավելին, նա պետք է ակտիվորեն տիրապետի այն փորձին, որը ստացել է իր մասնակցած դասերի ընթացքում։ Այս պրակտիկան նպաստում է ուսուցիչների միջև փորձի արդյունավետ փոխանակմանը,ինչպես նաև, դպրոցում բարձրանում է ուսումնական գործընթացի մակարդակը։

Նման գործելաոճի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է մեծ աշխատանք կատարել, որտեղ պետք է կազմել դասի վերլուծության պլան։ Այն ներառում է.

- Հիմնական նպատակները,
  - դասի կազմակերպումը,
  - դասի համապատասխանությունը ընդհանուր ընդունված պահանջներին,
  - դասի բովանդակությունը,
  - մեթոդաբանությունը,
  - հոգեբանական հիմքերը,
  - տնային աշխատանքը,
  - ուսուցչի մանկավարժական գործունեության նոր էլեմենտները։

Ուսուցումը եզակի գիտություն է։ Դա կարելի է սովորել միայն փորձի և սխալի շտկման միջոցով: Եթե անգամ հազար դասալսումներ ունկնդրել, միևնույնն է, առաջին անգամ չի կարողանա կատարյալ դասավանդել, քանի որ ուսուցիչը դեռ չունի բավարար հմտություններ ու կարողություններ։ Միայն գործնականում է ուսուցիչը հասկանում, թե ինչպես են գործում տարբեր մեթոդները: Նրա համար արդյունավետ կլինի, որ ինքը կարողանա իր համար մշակել սեփական մեթոդներ։ Ինչպես կարծում էր հայտնի ուսուցիչ Մակարենկոն, ուսուցիչը ոչ միայն պետք է սովորեցնի, այլ նաև պետք է աշխատի ինքնուսուցմամբ։

Ինչպես արդեն բազմիցս վերևում նշվեց, ուսուցիչների կողմից դասերին փոխադարձ հաճախելը նրանց մասնագիտական աճի կարևոր հատկանիշներից է: Հաճախ նման փորձառությունները կիսվում են ուսուցիչների կողմից, ովքեր աշխատում են նույն կամ մոտակա դպրոցում:

2.4 Համացանցը և IT տեխնալոգիաների օգտագործումը։ Ուսուցիչների ցանցային համայնքներ

Համակարգչային տեխնոլոգիաներն այնքան ամուր են հաստատվել ուսուցիչների պրակտիկայում, որ ուսուցիչները ոչ միայն օգտագործում են դրանք ամեն օր, այլև անհրաժեշտություն կա ընդհանրացնելու դրական փորձը, քննարկելու դասավանդման առարկաների արդիական խնդիրները, փոխանակելու մանկավարժական մտքերը, ինչպես նաև քննարկել և փորձել լուծել նոր մարտահրավերները։ Ուսուցիչների ցանցային համայնքները, որոնք չգիտեն սահմաններ և հեռավորություններ, հեշտությամբ լուծում են մի շարք կարևոր խնդիրներ, որոնց լուծումը նախկինում հնարավոր էր միայն անմիջական հանդիպման և տեղեկատվության փոխանակման միջոցով, փոստով կամ էլեկտրոնային լրատվամիջոցներով:

Ներկայումս ուսուցիչների և ուսումնական գործընթացի այլ մասնակիցների ցանցային գործունեությունը կրթական համակարգում տեղեկատվականացման գործընթացների հետ կապված ամենահրատապ թեմաներից է: Ուսուցիչների ցանցային համայնքները ցանցում մասնագիտական գործունեության կազմակերպման նոր ձև է, դա նույն առարկայի կամ ցանցում խնդրահարույց մասնագիտական գործունեության մեջ աշխատող մասնագետների խումբ է: Մասնակցությունը մասնագիտական ցանցային ասոցիացիաներին թույլ է տալիս նույն երկրի տարբեր մասերում և արտերկրում ապրող ուսուցիչներին շփվել միմյանց հետ, լուծել մասնագիտական հարցեր և բարելավել իրենց մասնագիտական մակարդակը:

Ցանցային համայնքներն առաջարկում են հաղորդակցության նոր ձևեր, որոնք թույլ են տալիս կիսվել փորձով, մեկնաբանել և հարցեր տալ անկախ հեռավորությունից, դիտարկել այլ ուսուցիչների դրական փորձը վիրտուալ վարպետության դասերում, բարելավել մեր որակավորման մակարդակը: Ցանցային համայնքներն առաջարկում են հեռավար ուսուցման, մասնագիտական մրցույթներին մասնակցելու հնարավորություններ, ինչը հանգեցնում է նաև ուսուցիչների վերապատրաստման հարմար ձևերի:

Հաշվի առնելով նորարարական մանկավարժական փորձի նոր մոտեցումները և դրա տարածման նոր հնարավորությունները կրթության ինֆորմատիզացիայի պայմաններում՝ առաջնահերթություն է դառնում համացանցում կրթական և մեթոդական նյութերի մշակումն ու քննարկումը, որոնք ուղղված են ժամանակակից կրթական տեխնոլոգիաները դպրոցների պրակտիկայում ներմուծելուն և ակտիվ կիրառելուն:

Ուսումնական գործընթացում ՏՀՏ գործիքների առկայությունը աստիճանաբար առաջնահերթություն է դառնում ավանդական մանկավարժության ոլորտում առաջադեմ մանկավարժական փորձի տարածման ուղղությամբ:

Արդեն այսօր մանկավարժական ցանցային համայնքների թիվը գրեթե երկրաչափական աճ է գրանցում: Ցանցային համայնքները զարգանում են դպրոցի, մարզի, առարկայական ոլորտների, խնդիրների մակարդակով: Ցանցային հանրությունը կարող է ձևավորվել և զարգանալ միայն համատեղ կոլեկտիվ գործունեության պայմանով: Այսօր դեռ կան խնդիրներ, որոնք խոչընդոտում են ցանցային մանկավարժական համայնքի զարգացմանը: Սա առաջին հերթին պասիվություն է, իներցիա, տեղեկատվություն ստանալու, բայց սեփականը չհրապարակելու ցանկություն: Ինչո՞ւ է ուսուցիչը դժկամությամբ միանում առցանց համայնքներին: Մի շարք ուսուցիչների շրջանում անցկացված հարցումներից հետո պարզվել է, որ նրանցից ոմանք չգիտեն ինչպես աշխատել համայնքում, չունեն ՏՀՏ գիտելիքներ, ոմանք ինտերնետում տեսնում են միայն բացասական երևույթներ, ուսուցիչների մեծ մասը ծանրաբեռնված է, ազատ ժամանակ չունի:

Ինչպես արդեն վերևում նշվեց, մասնակցելով մանկավարժական ինտերնետային համայնքներին՝ ուսուցիչը հնարավորություն ունի.

- սովորել և ձեռք բերել ժամանակակից մարդուն անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և որակներ,
- ստանալ ամենաարդի տեղեկատվությունը հետաքրքրող թեմայի վերաբերյալ,
- ստանալ որակյալ խորհրդատվություն և փորձագիտական խորհրդատվություն,
- մուտք ունենալ զարգացումների մեթոդաբանական բազա,

- շփվել գործընկերների հետ տարբեր ֆորումներում,
- հրապարակել իր բովանդակությունը,
- մասնակցել հրապարակված նյութերի քննարկմանը,
- մասնակցել մասնագիտական մրցումներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ամենակարևոր հաղթանակը սեփական «ես»-ի նկատմամբ տարած հաղթանակն է: Սեփական «ես»-կողմից հաղթված լինելը և' ամոթ է, և' նվաստացուցիչ» :

Պլատոն

Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ մասնագիտական գործունեության լավարկման արդյունավետ միջոց է: Այո', յուրաքանչյուրս կարող ենք ստեղծել և կերտել մեր դասապրոցեսը,սակայն կատարյալը սեփական «ես»-ի շրջանակներից դուրս գալն է և համագործակցության շնորհիվ կատարյալ արդյունքի հասնելը: Համագործակցումը խթանում է պատկերացումները և կապում ստեղծագործ մտքերը: Երբ երկու առերևույթ առանձին հասկացություններ կամ ինքնատիպ անհատներ միանում են,անպայման մի նոր գաղափար է ծնվում, և այդտեղ «ես»-ը զիջում է «մենք»-ին: Միասին քալելը կարող է սկիզբ լինել, միասնականությունը՝ ուղի դեպի առաջընթաց, միասին աշխատելը՝ուղի դեպի հաջողություն»:

Հղումներ և գրականության ցանկ

http://ext.spb.ru/2011-03-29-09-03-14/89-preschool/11409-Professionalnoe_sotrudnichestvo_pedagogov.html

https://infourok.ru/prakticheskiy-seminar-pedagogicheskoe-sotrudnichestvo-pedagogov-raznogo-professionalnogo-urovnya-1220845.html

https://nsportal.ru/detskiy-sad/upravlenie-dou/2018/05/13/formy-raboty-v-pedagogicheskom-kollektive-po-obmenu-opytom

https://www.maam.ru/detskijsad/prakticheskii-seminar-pedagogicheskoe-sotrudnichestvo-pedagogov-raznogo-profesionalnogo-urovnja.html

https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808

https://fb.ru/article/465973/vzaimoposeschenie-urokov-uchitelyami-analiz-i-obrazets-zapolneniya?ysclid=ll9b19t4v6993674814

https://urok.1sept.ru/articles/633962?ysclid=llc22242c0633076320

https://urok.1sept.ru/articles/633962?ysclid=llc4dsp3y1684313822